ՀԻՆ ՃԱՊՈՆ

Մի քանի վայրկեանից յետոյ մտնելու էինք սրբազան Կիոտօն, Ճապոնի հին սրբավայրերից մինը ու միկադոյի նախկին մայրաքաղաքը:

Եւրոպայի միապետներից ոչ մէկի հարստութիւնը չունի այն հնութիւնը, ինչ որ միկադոյինն է:

Նա իր նախորդների ծագումը անընդհատ գծով հասցնում է մինչեւ աստուածները. նրա անմիջական նախամայրը Ամատերասուն է, արեւի աստուածուհին, որ ինքն էլ ծնւած է Ճապոնի արարիչ Իզանագիի ձախ աչքից:

Միկադոների, ինչպէս եւ ընդհանրապէս Ճապոնի վաւերական պատմութիւնը սկսւում է հինգերորդ դարից Քրիստոսից յետոյ:

Սկզբներում միկադօն էլի բաւական մատչելի է եղած ժողովրդին. բայց ժամանակի ընթացքում քիչ-քիչ շրջապատել է իրան փառահեղութեամբն ու ծէսերով, եւ քաշւել է բոլոր աշխարհական գործերից: Հազիւ էր պատահում, որ ժողովրդին երեւար եւ այն ժամանակ ամենքն ընկնում էին գետին երեսնիվայր, չը համարձակւելով աչք ձգել նրա աստուածային երեսին:

«Մեր կայսրները,— ասում է ճապոնացի մի պատմագիր,— անցնում էին իրանց կեանքը ծածկոյթի ետեւ. նրանց ոտքը երբէք հողին չէր դիպչում: Դրսի ոչ մի ձայն չէր հասնում նրանց ականջին ու չէր վրդովում նրանց հանգիստը»:

Միկադոյի այդպիսի առանձնացման շնորհիւ սկսեց ուժեղանալ դայմիօսների ազդեցութիւնը. այդպէս էին կոչւում Ճապոնի աւատական իշխանները, որոնք բացարձակ անկախութեամբ կառավարում էին միկադոյից աւատ ստացած